



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԻԹ

ԱՐԱՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 60


ՍԵՊՏԵՄԲԵՐ 1/14 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԻԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆՊԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Սեպտեմբեր 1/14 † Թիւ 60

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

ՓԱՌԱՌՈՐԵԱԼ ԿՈՒՍԷՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՄՍՈՐ

Դ.

«Կացցէ Դիսոյ ընդաջմէ բուսմէ ի հանդերձս ոսկե-
հունս զարդարեալ եւ պանուհեալ» (Սղմ. ԽԴ, 10):

«Արի՛, ե՛կ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի
իմ, երեսցո՛ր ինձ զերեսս է՛մ, եւ լսելի արա՛ ինձ
զբարբառ է՛մ. զի բարբառ է՛մ քողոք է եւ տեսիլ է՛մ
գեղեցիկ» (Երգ, Բ, 14):

«Նախկին աւետեաց ընկա՛լ այսօր կատարումն,
վերաբերեալ ի ստորնայննոցս յիմանալեացն խո-
րանն, հուպ անմասոյց լոյս երրորդութեան՝ փա-
ռաց ի փառս փոխելով» (Ս. Ներսէս Շնորհ. Գանձ
Փոխմ.):

Հազիւ թէ Աստուածամայրն աւանդեց իր ամենօրհնեալ հոգին,
իսկոյն մտաւ ի փառս: Աստուած Հայտնեց սակայն մեզ թէ ե՛րբ իր
սրբանեալ մարմինը յարութիւն առնելով միացաւ երանեալ հոգւոյն:

Հասարակաց կարծիքն է թէ թաղումէն երեք օր վերջը, ըստ նմանութեան Յիսուսի իր որդւոյն, Կուսութեանց Մօր լուսածին մարմինը լուծեց մահու կապանքը, զարթեալ ի սէր և յարեալ լուսափառ և թռեալ ի թեւս հողմոց՝ ի գաւառն երանելեաց, աստուածայնապէս գեղեցիկ և ճառագայթարձակ: «Անպն կաշաւ զնա» (Գործ. Ա. 9) մահկանացու աչքերէ: Անհետացաւ երկիր իբրեւ հիւլէ մը. և երկնից զաւառները լուսավառեցան անդունդներէ բարձրացող Աստղին կուսական շողերէն: Եւ ահա երկինք զգրդեցան. զի երկնքի ամենամեծ տօնն էր այդ՝ յետ Համբարձման Քրիստոսի Հրեշտակաց գունդեր անամար, բանակ երկնաւոր անմահ թագաւորին շուշանափայլ թեւապարելով, փութացին ընդ առաջ իրենց Դշխոյին, և հիասքանչ և մահացու լսելեաց անընդունակ հրճուանաց, մեղեդիներու հեղեղ մը հնչեց եթերին մէջ և անմահութեան բուրումը տարածուեցաւ վէտ ի վէտ, և Մայրը՝ Որդւոյն յեցած, կ'ելլէր կը բարձրանար լուսասփիւռ Դշխոյ յաւիտենից. «Ո՛վ և առ որ՝ եղեալ զայ սպիտակացեալ, յննու զայ յեղորորդի իւր» (Եբգ. Ը, 5.):

Եւ երկնային զօրութիւնք կ'երգեն ներդաշնակ. «Ո՛վ և առ որ երեւեալս և իբրեւ զառաօս, գեղեցիկ իբրեւ զուսիկ, ընկիր իբրեւ զարեգակի, զարեւանալի յօրինեալ» (Անդ. 2, 9): Եւ Մարիամու հետեւորդները կը պատասխանեն. «Տաճարն է Աստուծոյ, սրբարան Հոգւոյն Սրբոյ, ծիրանի մեծի Արքային. Բաւութիւնն է, Տապանն, Մանանայն և Տապանակ Կտակարանաց... Աստուծոյ Մայրը, Աստուծոյ Հարսը, Աստուծոյ Դուստրը, մեր ու ձեր թագուհին» (Ս. Թովմ. Վիլ.): Նահապետք ու Մարգարէք և արդարք աճադարեցին զուարթերեսք ընդ առաջ, ոմանք կրկնելով իրենց յոյն հաստատուն առ Փրկիչն և առ Մայրն, միւսներն կրկնելով իրենց ներշնչեալ պատգամներն՝ Աստեղ ծագումին, Արմատոյ ծաղկումին, Կուսոյ յղացման ու ծնունդին, փակուած Դրան, անկոխ Պարտէզին, կնքուած Աղբեր¹. և Դաւիթ կը գոչէր. «Ո՛վ Արքայ երկնաւոր. ահա այս է Դշխոյն որուն գեղեցկութեան ջանկացար, և որ յաւիտեանս պիտի բազմի քու աջակողմդ, ոսկեհուն հանդերձներով զարդարուած ու պաճուճուած»: Եւ Մարիամ կը պատասխանէր ամենուն. «Մեծացուցէ անձն իմ զՏէր. և ցնծացէ հոգի իմ Աստուծով Փրկչաւ իմով. Ահա յայսմեռէ երանեսցեն ինձ ամենայն ազգք» (Ղուկ. Ա. 46.): Ահա այսպէս՝ մտաւ երկինք Սրբուհի Կոյս Աստուածածին և այսպէս ծէսը կատարուեցաւ, և լմնցաւ այս սրբադան հանդէսը: Ամենէն երեւելի բանաստեղծներ և նկարիչներ սքանչելապէս պատկերացուցին այս հիասքանչ տեսարանը՝ ապշեցուցիչ ներշնչումով, իրենց արուեստագէտ հոգւոյն և որչիական սրտին խորերէն բղխած: Աստուածայինն Տանթէ իր քնարին ամենէն քաղցր թելերը հնչեցուց՝

¹ Թիւք. ԻԴ, 17. Ես. 14. Եզ. ԽԴ, 2. Եբգ. Դ, 12.

արեցած մինչև ցնուադունն, այս հիանալի Կոյսին փառացը առջև, երանելեաց գաւառին մէջ, հուպ առ Լոյսն յաւերժական: Ապա և Միքէլանժ և Ռաֆայէլ, Մուրիլլոյ, Բուպէնս, Թիցիանոյ, Վէրօնէզէ և այլ անթիւ անմահներ, մարդկային հանճարին կարելի եղած մրցումով յապուշ կրթեցին մարդկութիւնը ի տես այս չքնաղ հանդէսին վերափոխման, անհատնում աղբիւր սքանչանաց և սիրոյ և յուսոյ անսպառելի: Եւ, ինչպէս ստէպ յիշատակեցինք, Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցին, ջերմեռանդագոյնն առ Տիրամայր Ս. Կոյս, որ ամենայն վատահոլութեամբ կը գոչէ. «Աստուածմիհ զնգ խոստովանեալ՝ ԵՐԿՐՊԱԳԻ Եկեղեցի ողորպառաց», Հայաստանեայց Եկեղեցին. կ'ըսենք, հրաբորբոս սիրով վերաբերուեցաւ անոր փառաւորութեան տօնին. արտակարգ հանդիսութիւններով պայծառացուց զայն, երգակցելով երկնայնոց: Վերափոխման տօնը մեծ Տաղաւարներու կարգը դասեց. և ծայրագոյն խանդով մը՝ փոխանակ Ութօրէքի, ինչպէս ուրիշ տօներու, ասոր Խննօրէք մը սահմանեց, Շնորհալի Հայրապետին սիրոյն բորբոքմամբ, և Շաքաթապաճէն անմիջապէս առաջ պատկերացուց յիշատակութիւնը Եփեսոսի Ս. Ժողովոյն Հայրապետաց որոնք վճռեցին Մարիամու Աստուածամայրութիւնը և հայնոյն լեզուները անիծանօք չանթահարեցին. և այս սրբազնասուրբ Մօր ամենասրբազան և վերջնական Տօնը մասնաւոր դիտումով Կիրակի օրուան վերածեց՝ ի յիշատակ յորութեան Աստուածորդւոյն որ օրինակ և պատճառ է Աստուածամօր յարութեան՝ հարկաւոր հետեւութիւն անոր. և գեղեցիկ ու ներշնչական երգերով պերճալարեց այս տօնը, Հարցելուն մէջ զՄարիամ՝ զուգադրելով իր Որդւոյն փառակից՝ որքան հար է ստեղծուածի. և Հայ Շարակնոցը որ իր առաջին էջը կը բանայ Աստուածածնայ ծննդեամբ, Հայ Շարակնոցը իր վերջին էջը կը գոցէ Աստուածածնայ վերափոխմամբ, ի նմին բովանդակելով ամէն խորհուրդ, երկինքն ու երկիր, ժամանակն ու յաւիտենականութիւնը. առաջնութիւն ծնաւ նա տնարատ՝ յարգանդէ մօրն Աննայի, իբրեւ շուշան ծաղիկ մարդկութեան. երկրորդութիւն ծնաւ նա անապական՝ յարդանդէ մօր՝ երկրի, վառ ի վառ վարդ. երկրից արքայութեան. — Եւ նոտաւ Մարիամ իր Աթոռին վրայ իր միածին Որդւոյն աջակողմը, երկնաւորն Եսթեր կամ Բերսաբէ. (Եսթ. Բ, 16 — 17. — Գ, Թագ. Բ, 19), յաւիտենից Դշխոյ անմահական:

1. «Կազմեց Դշխոյ ԸՆԴ ԱԶՄԷ ՔՈՒՄՄԷ»: Ս. Գրոց մէջ նուիրագործուած է այդ բառը Քրիստոսի համար. Աստուծոյ աջակողմը նրա տաւ է Փրկիչ Քրիստոս իբրեւ Քահանայապետ ոչ կը բաղմի ընդ աջմէ մեծութեան: Մի և նոյն ոճը Ս. Գրքէն անցած է նաեւ Հանգանակնե-

¹ Մարկ. ԺԶ, 19. — Եբր. Ը, 1. — Հմմ. Հռ. Ը, 34. — Եբր. Ա, 3, 13. — ԺԲ, 2. — Եփ. Ա, 20. — Կող. Գ, 1. — Ա. Պետր. Գ, 22:

բուն մէջ, ինչպէս է Առաքելոցը, Նիկիայն և Ս. Աթանասինը, ի՞նչ կը նշանակէ ուրեմն «հախլ ընկ աջնե» : Իբրեւ մատուած, Քրիստոսի բազմիքն ընդ աշմէ Հօր ուրիշ բան չէ եթէ ոչ տէր ըլլալ միեւնոյն փառաց, երանութեան ու կարողութեան, զոր ստացած ունի անիոփոխ՝ յաւիտենից յաւիտեանս. իսկ իբրեւ մարդ, նոյնպէս ստացունէ է մեծութեան, երջանկութեան ու զօրութեան. ինչպէս կը պատշաճի ստեղծուած բնութեան, անհամեմատելի և անմերձենալի ու է ուրիշ արարածի մը. զի այդ մարդը՝ որ է Յիսուս Քրիստոս, Բանն Աստուծոյ է՝ յերկուս բնութիւնս գոյացաբար (Ս. Թով. Գ. Մ. Խ. 58) : Ահա որպիսի բարոյական ու խորհրդաւոր նշանակութեամբ պէտք է իմանալ Մարիամու նստիլն ալ ընդ աշմէ իր Որդւոյն : Յիսուս, ըստ Ս. Պօղոսի. «նստաւ ընկ աջնե մեծութեան արոտոյն յերկին» (Եբր. Ը, 1). այնչափ աւելի բարձրացած քան զհրեշտակս, որչափ բարձր է իր ժառանգած անունը. քանզի կա՛յ հրեշտակ մը որուն ըսած ըլլայ Աստուած. «Դու իմ որդիս ես, ես այսօր ծնայ զքեզ» . և թէ՛ «նստե՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քո թշնամիներդ պատուանդան ընեն քո ոտներդ» . (Եբր. Ա.) : — Ահա, հարկաւոր եղած համեմատութիւնը պահելով, կ'իմանանք Մարիամու տիտղոսն ալ : Միեւնոյն իրաւամբ ըսաւ անոր իր Որդին. «Դու իմ մայրս ես, եւ դու ծնար զիս» : Ամէնքը պաշտօնեայք են. ան միայն, թէ և աղախին անունը տուաւ իրեն, սակայն իբրեւ «Արքայարան լուսակիրս՝ անմահ թագաւորին, և մայր կաթնամատոյց՝ բնաւից ստեղծողին» (Նարեկ. Ներք. Դ.), իրաւամբ կրնայ ըսել Յիսուսի. «Ես քո Մայրդ եմ, եւ Դու իմ որդիս ես» : Չեղաւ ստեղծուած մը երբեք որուն այսպիսի խօսք մ'ըսուած ըլլայ, «Նստե՛ իմ աջ կողմս, հազորդակից իմ աթոռոյս, իմ ամէն բարիքներուս, և ինչ որ ունիմ մարդկութեանս մէջ՝ շքնղութիւն, կարողութիւն և ուրախութիւն» :

Եւ Մարիամ՝ որ «Սքանչելարուեստ հրաշիւք ըմբռնեալ բազիօք զանպարագիրն էակ մարդացեալ՝ ի համբոյր հպելոյ մատուցման չրթանցն ողջագութեաց» (Նարեկ. Ներք. Է.) իրաւամբ նստաւ ընդ աշմէ Որդւոյն : Մասնակից եղաւ երանութեան, մեծութիւններու և զօրութեան զոր ունի մայրն այն համեմատութեամբ առ որդին, զոր սա ունի՝ ըստ մարդկեղէն բնութեան, համեմատութեամբ առ Հայրն : Ստորնագոյն է այս մասնակցութիւնը՝ անձնական միութիւն չըլլալուն համար. և կախում ունեցող իր որդւոյն արժանիքներէն, որուն մարդկութիւնն ալ կ'ընդունի ամէն ինչ իր աստուածութենէն : Սակայն Մարիամու այս արժանապատուութիւնը ուրիշ ու է արարածոց, նոյն իսկ ամենակատարեալներուն արժանապատուութեանը անհունապէս գերազանց է : Եւ ինչպէս որ Հօր աջ կողմը բացառաբար մարդացեալ Աստուծոյ է յատուկ, այսպէս մարդացելոյն Աստուծոյ աջ կողմը նստիլ յատուկ է միայն Աստուածամօր, այն կարգի վրայ ուր ոչ ոք յարարածոց պիտի ընդուն-

ուի՝ երբեք։ Եւ ահա ասոր համար է որ մեր մարգարտայեա շարական-
ները վերափոխեալ և պսակեալ Կուսին համար, թէ՛ ամբողջ շարական-
ցին մէջ և թէ բոլոր ծէսերու մէջ միակ ըլլալով, Գործատան մէջ որ
Աստուծոյ փառաբանութեան միայն սահմանուած է միշտ, երկու ան-
գամ աներկիւղ կ'արձանագրեն սա բառերը, «ԸզՏէր օրհնեցիք, բարձր
արարեք զծնող անսանելի Բանին զմիշտ Կոյմն»։ «Վերապատեմք զփոխումն
քո ի յերկինս, որ առաւել քա՜նքնացեալդ ես յափեանս»։ և՛ «Ընդ Որդոցն
միածնի զնայրն ամեօրհնեալ Մարիամ գովելով բարձր արարեք» (Հարց. ա.
և բ. աւ.)։ Կը յայտարարէ Շարականն զՄարիամ գերազանց քան ամէն
սուրբեր։ Որդւոցն Աստուծոյ հետ համապատուաբար փառաւորուած,
քանզի Աստուածամայր է, որուն կը վայելէ գերազանց պաշտօն՝ քան
ո և իցէ ստեղծուածի։ Հաւատար չէ նա Աստուծոյ. բայց և ոչ արարած
մը կրնայ հաւատարիլ իրեն։ Աստուած բարձրացուց զանիկա, Աստուա-
ծակերպ, զի իր դստեր և հարսին և մօրն է փառքը։ Ուստի եթէ Յի-
սուս Թագաւոր է Թագաւորաց, Մարիամ ալ արժանապէս Թագուհի է
երկնի և երկրի։ Եւ ահա ասոր համար ամէն եկեղեցիք, ամէն ազգեր,
ամէն դարեր, ամբողջ մարդկութիւն, ցյաւիտեանս պիտի փառաւո-
րեն զինքը իրեն՝ «Թագուհի և Դշխոյ մեծափառ և Տիրուհի աիե-
գերաց»։

Եւ Ս. Հայրերն են որ սորվեցուցին մեզի այս վերակոչումը.
«Թագուհի ամէն արարածոց, ըսաւ Ս. Եփրեմ, որոյ մենք ծառաներն
ենք, գաւազան արքայական որ կ'իշխէ ամենուն»։ Եւ Ս. Պետր. Ոս-
կիարանն՝ «Մարիամ պէտք է թարգմանուի Տիրուհի և Արքայուհի»։
Ս. Տարաթիոս՝ «Դշխոյ՝ իրացն ընդհանրութեան»։ Ս. Յովհ. Դամ.
«Վերափոխմամբն Մարիամ կը մտնէ իր Որդւոցն ստացուածոց մէջ՝ ըն-
դունելու համար ամէն արարածոց յարգանքը... զի որդին ամէն ստեղ-
ծուած ենթարկեց իր մօրը»։ և ուրիշ տեղ. «Նա յիրաւի ամէն արա-
րածի Տիրուհի եղաւ երբ Ստեղծողը իրեն մայր բրաւ զայն»։ Եւ մերս
հրաշալի հրեշտակն Նարեկայ յանդգնեցաւ բացագանչել անվրդով. «Ձա-
նեղծին փառաց ճոխութիւն քեզ սեպականեցեր, Սուրբ Աստուածա-
ծի'ն»։ «Ձայսքան փառազարդ չնորհաց զընդունակն և ո՛չ նոքին Աստ-
ուածութեանն օրհնառաք հրեշտակացն պարք որպէս պարտն է պատուել
ժպրհին... քանզի անճառութեամբ անհասականաւ վեհազոյն ամենե-
ցուն փակեալ գտանի» (Ներք. Բ.)։ «Երրորդութեանն անտես թագնու-
թեան խորհրդակից սիրոյ կոչեցար և խրախակից վերնոցն բարձրութեան
անկապտելի անուամբ պատուեցար» (Սնդ., ԺԹ.)։ Ոյր վասն յանվախ-
ճան դարս յաւիտենից պիտի տեւէ անոր Թագաւորութիւնը, ինչպէս իր
Որդւոցն. «Եւ Թագաւորութեանն նորա՝ վախճանն մի՛ յիցի» (Դուկ. Ա., 33)։

2. Միայն Թագուհի է Մարիամ, Կան այս՝ ուրիշներ ալ որ Աստու-
ծոյ երեսէն լուսաւորուած՝ պիտի Թագաւորեն յաւիտենից յաւիտեանս՝

ոյր վասն և Որդին մարդոյ կրկուցուի «Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց»², և Աւետարանի մէջ նոյնը խոստացաւ Առաքեալներուն³, և իւր Հօր հրամանակատարներու⁴, և Փրկչին վերջին բառն է առ ընտրեալս «ի սկզբանէ աշխարհի անոնց համար պատրաստուած քաղաւորութիւնը ժառանգել»⁵։ Եւ հաւատարմութեամբ Աստուծոյ ծառայելը՝ թագաւորել է։ Բայց սակայն Մարիամ է միակ թագուհի։ Քանզի ու է ուրիշ երկնաւոր թագաւորութիւն կը տօգուենի անոր առջև և չկրնար անոր հետ հաշուի գալ։ Գերազանցաբար և անհամեմատաբար Տիրունի է նա՛նա միայն՝ «Երրորդութեան փառացն տարող» (Նարեկ. Ներք. ի վե. րայ գրոյ ան. ի)՝ անկախ է՝ բաց յԱստուծոյ. նա միայն կարող է առատօրէն և յանձախս բաշխել շնորհներ և պարգեւներ. զի նա ստացած ունի իր Որդւոյն ամէն բարիքները. նա միայն ունի անհաղորդելի անուն թագաւորութեան՝ Աստուծանայրոջնիւր։ Միակ թագունի է նա, զի ուրիշ ամէն թագունիք իրեն ստորակարգեալներն են և հպատակները։

3. Մարիամ է Թագուհի Երկնից, փառօք պսակուած. առջին տակը լուսին և գլխուն վրայ պսակ յերկոտասան աստեղաց, «Թագ հիւսեալ երկնային յեռեալ յականց անմարմին, բերեալ պսակ Սուրբ Կուսին յորժամ փոխիւր յաշխարհ վերին» (Կիր. Վ. Անձ. Փ.)։ Հնարեղաբայն է նա քան ամէն ընտրեալները. բոցակէզ սիրով քան զՍերովբէս, աւելի լուսաւոր մտօք քան զՔերովբէս. հզօրագոյն քան զԶօրութիւնս. անհամեմատաբար գերազանց է նա Նահապետաց, Մարգարէից, Առաքելաց, Մարտիրոսաց, Կուսանաց և ամենայն Սրբոց։ Հետեւաբար իր արժանաւորութեան անըմբռնելի միակ գերազանցութեան մէջ կը բովանդակէ ամէն երկնային աթոռոց գահակալութիւնները ինչպէս անոնց ամենուն զանազան և բազմապատիկ շնորհներն ու վարձքերը ու երանութեան աստիճանները բազմազեղ և անհամեմատ լիութեամբ կը բովանդակէ. ոյր վասն կ'ըսէ մեր Շարականը. «Տեսանելով զանազան աթոռան զոր պատրաստեալ է քեզ Տէրունւոյդ» (ա. օր. փոխմ. օրհ.)։ Անոնց ամենուն թագունին է նա. և երբ իրենց պսակները գետին դնելով կը խոնարհին երկրպագութեամբ Գառլին առջև, կը խոնարհին նաև անոր աջ կողմը բազմած Մարիամու աթոռոյն՝ ո՛չ հաւտօար այլ նման յարգանօք, զի անոր շնորհիւ է որ ստացան այն պսակը և թագաւորութիւնը։ «Ամենեւին զեղեցիկ ես՝ մեղաւոր իմ, եւ արաս ինչ ոչ գոյ ի քեզ։ Ե՛կ ի Լիբանանէ, հա՛րսն, ե՛կ այսր ի Լիբանանէ»։ (Երգ. Դ, 8.)։ «Ի

¹ Յայտ. ԻԱ, 27.— ԻԲ, 4, 5.— Դ, 21.

² Յայտ. ԺԹ, 16.

³ Ղուկ. ԻԲ, 30.

⁴ Մարկ. Ժ, 40.— Ղուկ. ԺԲ, 32.

⁵ Մատթ. ԻԵ, 34.

նման է փրկութիւն, ի նման է կենդանութիւն, ի նման է և Գրիստոս ըստ մարմնոյ, որ է Աստուած օրհնեալ յաւիտեանս» (Խորենացի, պատմ. Պտկր. Կ.) :

4. Թագունի երկրի, որ իր իշխանութեան բարձունքներէն կը տիրէ ազգաց և ազանց վրայ. «Որոց անհամար և անթիւ ազանց ամրական և պանպանական պարիսպ կառուցար, քանզի յարժանանայց և յամենազօր քոյ բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ, մնամք ի հաստատութեան... Պատուաղ ամրակառոյց Գաղաքին վերնոյ, որում զհանուրս՝ բնակիչս արարեր» (Ներք. ԻԴ.) : Հետեւաբար «Աներկբայ յուսով հաւատարմով ապրիլ», ազգք և ազլինք խոնարհութեամբ երկրպագելով այս աննման արարածին, չնորհաց և գթութեան Մօրը առջև, պիտի գովին ու փառաբանեն զինքը, պիտի երանեն անոր՝ մինչև ցվերջ ժամանակաց։ «Յանուն Յիսուսի ամենայն ծաւնր կրկնեսցի՝ իբրև Տեառն և Թագաւորի. ուստի և յանուն Մարիամու ամենայն ծաւնր կրկնեսցի՝ իբրև Տիրամօր և Թագուհւոյ : Ով որ պիտի կոչէ Տիրոջ անունը, պիտի փրկուի. ուստի ով որ պիտի կոչէ Աստուածամօր անունը, Հպիտի կորսուի. և ինչպէս որ Տիրոջ ողորմութեամբ լի եղև երկիր, նոյնպէս և Տիրամօր գթութեամբ լեցուեցաւ արեգեքք» : «Որ աչաց մարդկութեան զանտեսն ի մարմնի ետուր նկատել, վասն որոյ զամենայն բերան գոհութեամբ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարիման, Սուրբ Աստուածածին» (Նարեկ. Ներք. Ը.) : «Արարչին մայր, անհասին ծնող, անբաւին գրկարան, ամենակալին յանձանձիշ, փառաղարդողին զգեցուցիշ, վերօրհնելոյն գրգիշ. ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քո բանի յիրաւի տաղուք քեզ երանի, մայրդ Յիսուսի» (Անդ, ԺԷ) : Ծառայ են անոր աշխարհակալ վեհապետներ ու ծիրանաղարդ բամբիշներ, որոնք բոկոտն կը կատարեն, ուրիշ մանացուաց պէս, անոր սրբավայրերուն ուխտագնացութիւնը. անկէ կ'աղերսեն չնորհ և օգնութիւն, անկէ՝ իմաստութիւն և կորով : Անոր օրհնեալ անունը՝ փառք է իր ծառաներուն. անոր յիշատակութիւնը՝ ցնծութիւն է և փրկութիւն մարդկային ազգի : Այս արտասուաց հովտին մէջ տառապեալ այս ցեղը, որ զՄարիամ Հարս ընծայեց յերկրէ յերկինս» պիտի գոչէ անդադար «Ողջոյն քեզ, Թագուհի մեծափառ. «Դու քաճարոթիւն Երուսաղեմի, դո՛ւ ցնծութիւն Իսրայէլի. դո՛ւ պարծանք ազգիս մերոյ. զի արարեմ զայս ամենայն քառութիւնս ձեռով քո Իսրայէլի, օրհնեալ է իշխիցի դու յամենակալին Աստուծոյ մինչև յաւիտեան» (Յուդ. ԺԵ. 10—11) : Ո՛վ ողորմութեան Մայր, ողջոյն քեզ, «Ընդ անաղտ մաքրութեանդ և անբիժ բարի, ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս, տունկդ կենաց պտղոյն օրհնութեան» (Նար. Բան Զ.) : «Դու մեր կեանքն ես», դու մեր քաղցրութիւն, դու մեր յոյսը : Գու որովայնիդ օրհնեալ պտուղն՝ Յիսուսը, աս աքսորանքէն վերջը ցցուր մեզի» : «Ո՛վ փառաւորութեամբ և օրհնութեամբ միշտ

Սուրբ Կոյս, Աստուածածին Մարիամ, Քրիստոսի մայրը, մեր աղաչանք-
նարը ընծայէ՝ քու Որդւոյդ ու մեր Աստուծոյն»։ «Ձեռք քո ի հոգ իդոց
քոց ընթացուի» (Երգ, Ա, 3)։ — «Եւ ելիցն իմ յերկրէս հովտէ առսնց
լլկանաց հետեւիլ, արասցես տօն ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի-
րարեխօսեա՛, ինդրեա՛, աղաչեա զի ըստ անճառելի մաքրութեանդ և
ահա զքանիդ հաւատամ զընդունելութիւնս փառաւորեա՛ զորդիդ քո
ի քեզ, Աղախին Աստուծոյ և Մայր. բարձրացի պատիւ քո ինե և
ցուցցի փրկութիւն իմ քեւ օրհնեա՛լդ միայն ի շրթունս անբլծս լեզ-
ուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ
անձրեւեալ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ Տեառն Յիսուսի, ա-
րարչին երկնի և բնաւին երկրի» (Նարեկ. Բան 2.)։

Այսպէս Մարիամ Աստուածամայր, բարձրեալ Թագուհի, Աստու-
ծոյ սիրոյն ու երանական տեսութեան մէջ առեղուած ի վեր քան ո՛ր և է
ստեղծուած, անպատում յնծութեամբ պիտի թաղարորէ յաւիտեանս,
փառք և ինդութիւն երանելեաց։

«Կոյս Մայր, Դուստր քո Որուոյդ,
Խոնարհ եւ բարձր աւելի քան ստեղծուած,
Յգր հաստատուն յախեցեալան խորհ դեան։

«Դու ա՛յն ես որ զմարդկեղեն բնութիւն
Ազնուացուցեր ա՛յնպէս՝ որ իւր Արարողն
Զխորեցաւ լինել նորին արարած։

«Ի հում արգանդի բորբոնեցաւ Սեր,
Որոյ զերմութեամբ ի յաւերժ խաղաղութեան
Այնպէս արձակեաց բողբոջ այն ծաղիկ։

«Յերկինս դո՛ւ ես ջան ցերեկեան՝
Ջան սիրոյ. եւ ի խոնարհ՝ ի մէջ մահացուաց,
Դու ես յուսոյ կենդանի աղբերակն։

«Ո՛վ Կին, այնքան մեծ ես եւ արժանաւոր,
Ջի որ շնորհք կ'ուզէ ու քեզ չդիմեր
Իւր իղձն կ'ուզէ անթել բռնի առնուլ։

«Քու մարդասիրութիւն ո՛չ միայն կ'օգնէ
Ում քեզ պաղատի, այլ նա՛ իսկ յաճախ
Լիաձեռն հասանէ նախ քան զաղաչանս։

«Ի քեզ ողորմո քիւն, ի քեզ գթութիւն,
Ի քեզ մեծութիւն, ի քեզ միանայ
Որքա՛ն ի ստեղծուած իցէ բարութիւն։

1 Տառթէ, Արք. ԼԳ. 1.

Ֆրանսուսներդ Վէ Թիւրքիա Իշլէրի

«Հէր քարաձօսա օլսուզը կիպի, Թիւրքիասա սախի ամիրը մուսաւրիպ

Պու սերլէվնա ալթրնսա , Լը Վէնքիւմ Սիւզլ» ղաղէքաւորն 1912 Օգոստոս 1 քա-
րիլիի հիւսկուրնսա «Գորրէմքոնսան» ճէրիսէսիճնէն ճազլէն միւնսէրին օլան մէզալէլի
էնէմլիլէրի ազիմէսիճնէ մէպնի այնէն թէրնէմէ վէ գարիինը բիրամրդըն էնգաւր քուր-
պիմանէլէրինէ աւզ իսէրիզ:

Թիւրքիասա մասուն յօժարընըն պիսալէրի վիւ շուրէրի ինսաւր

էյէր վուզոււթը հազրէ հուրըլլա թէպըզ խիլէճէք օլուրսա ,
Թիւրք Ֆրանմասուն լօժարընըն սուրէթի իհտասը բէք ղարիպ տիր :

1908 իսթիլալընըն մէնշար օլան իքի պաշլըճա լօժար (Macedonia
risorta վէ Labor et Lux) իթալիա Կրանթ Օրիանընա թապի վէ ծնուն
էմիրլէրինէ միւնգաւա ալրլար : Իսթիլալտան ծն սէքիզ այ էվվէլ Բա-
րիզաէ նէշը օլունան պիր ֆրանմասուն թէսալէսի , ֆրանմասունըլըն Թիւր-
քիասա վիւնուտ պուլմամասը հազընտա օլան մէմուռնիլէթէ ըաղմէն
Սէլանիքաէ , իթալիա Կրանթ Օրիանընա թապի իքի լօժ մէվնուտ օլ-
տուղընը , պուլմարտան Macedonia Լօժընըն թէյասէթինտէ ան ասըլ Սպա-
նիալը էմմանուէլ Գարասո համրնտա պիլ ախէրէ Ապա-իւլ-Համիտին խա-
լընը թէպիլիզ էալն զօմիսիսն ազալըլընա թախին օլունան պիր մուսէվի
պուլունարընը , վէ պու իքի լօժտան մասա Ֆրանսա Կրանթ Օրիանընա
մէրպուլթ «Veritas» համրլլա տիկէր պիր լօժ տահա վար խտուկինի նէշը
էյլէմիլտիր : Այնի թէսալէ հէման օ իւլմէրօսընտա , Սէլանիքաէ Սպանիա
Կրանթ Օրիանընա թապի պիր լօժին իհտասըլլա ուզրաշլարըլընտա պիլ-
տիրիյօրտը , վէ «Սէլանիյին» 110,000 սէքէնէսինտէն 70,000ի մուսէվի օլ-
տուղը հասէպիլլէ պուրտսը ղայէթ մինասիտ պիր մէմէքէթ տիր» տէ-
յօրտը¹ :

Ֆիլհագիգա , պիր գաշ հաֆթա սօնրա Սէլանիքաէ Սպանիա Կրանթ
Օրիանընա թապի «Perseveranza» լօժը թէլէսիս օլունմուշ տրր : Իսթիլ-
ալտան աղ սօնրա Ժէօն Թիւրքլէր 1908 Յուլիսինտէ վազը օլարազ
Համիա խտարէսինի տէվիրէն իսթիլալտա ֆրանմասունըլըն օյնատըլը
լօլը աշըլտան աշրլա իգրար իտիյօրլարտը :

Ֆրանսուսներդ , մուսէվիյէր վիւ Թիւրքիա իսթիլալը

Իլք «Իթթիհատ վէ Թէրազըլը» գօմիթէսինէ մէնսուպ օլան էն հու-
ֆուզըլը ազալարտան պիրինէ Բէֆիզ պէյ պու խուսուստա ղայէթ վազին
իգրարլարտա պուլունմըշ տրր : Քէնտի տօսթլարընըն ֆրանմասունլար , վէ
պախուսուտա Թիւրքիասա միւլէսէս օլան իքի իթալիան լօժարը նէզ-
տինտէ պէօյիւք պիր իսթինատկեան պուլտուզլարընը աշըգտան պէյան
էյլէմիլտիր :

¹ «L'acacia» Յունի. 1907:

Պուլ լոժարըն Իթալիա Կրանթ Օրիանընա միւրաճաթ իքտիքլէ-
րինի վէ որաւանն առ, հիյնի հաճէթտէ, Տէրստատէթ Իթալիա Սէֆորէ-
թինին միւտախալէսինի էլտէ էթմէք եօլունտա վաս ալլնմասընը տա
Րէֆիգ պէյ իլավէթէն պէյան էթմիշ տիր, («Թան» 20 Օգոստոս 1908) :

Իթիթիլալան սօնրա արթըզ «Իթթիհատ վէ Թէրազդը» ճէմիյէթի
քէնտի ֆրանմասօն վէ եահուտի ալամէթի ֆարիգոսընը մուհաֆալա էյ-
լէտի, վէ պու թարիխտէն իթիպարէն Թիւրքիատա պիր չօզ լոժարըն
քիւշտա էտիլտիյի վէ աշի վագրթտա տա Ալլանըզ վէ մէզհէպսիլ շէ-
տիտ պիր բօլիթիգանըն թագիպ օլունտուզը կէօրիւլտիւ :

1909 վազասաղմա ֆրանմասօնըղըն սեպհպիյէթ րօղ

Տահա պու կիւնէ գատար 1909 Ապրիլ 13 վազաւասընտ տարի
թէքմիլ պիր իյլանաթ վէրիլմէմիշ տիր: Գօմիթէ պունը Ապտիւլ Համիտէ
խնատ խալօրսատա, թահլիլ էլլէտիյիմիլ մէզալէյէ նազարէն «միւթէ-
ալլէմ, վալըֆ վէ վաթանիլէրվէր Օսմանլըլար ումուլիյէթլէ պու խ-
նատը գապուլ էթմէյօրլար» վէ պու վագըն էսկի Սուլթանըն խալընա
պիր սէպէպ պուլապիլմէք իչուն ժէօն Թիւրքլէր թարաֆընտան էլ ալ-
թընտան թէշվիք խալմիշ պիր հարաքէթ տիր, տէյօրլար :

«Ծուրասը մուհազգապ տըր քի հարաքէթը իրթիհալէյէ, Գօմիթէյէ
մէրպուլթ օլան վէ Սէլանիքլի Րէմլի պէյ նամընտա պիր եահուտինին
գօմանտաը ալթընտա պուլունան Սէլանիք առքէրի թարաֆընտան իլէրի
կէօթիւրիւլտիւ : Պու Րէմլի պէյ հարաքէթի իրթիհալէյէ հազգընտա իճ-
րալը թէֆթիշաթ էթմէք իւզրէ թային օլունան Տիվանը հարպ գարչը-
տընտա մուհաքէմէ օլունաճազ վէ Սուլթանըն մահրում էտիլտիյի հու-
զուգըն քէնտիպինէ իատէ մագսաալլա գօմիթէյէ գարչը օլան պիր խ-
հանա իշթիրաք էլլէմէսինտէն տօլալը ճէզատիտէ օլաճազ եէրաէ եէնի
ճիւլուս էտէն Սուլթան Մուհամմէտի իսամիսէ Սէր Եալէր թաին օլուն-
մուշտըր :

Բէզալիք Սթանպօլ միւրէթթէպանտան հալը իսհանտա պուլունան
առքէրլէրէ գօմանտա էտէն բաշա տախի, Տիվանը հարպ գարչընտ
չըգաճազ եէրտէ, էվլէլ էմիրտէ մուվազգաթէն մուհիմ պիր վալիլիյէ
թային օլունմուշ վէ պիլ ախէրէ, ֆրանմասօն լոժարընտան պիրինէ ին-
թիսապ էթտիքտէն սօնրա տա, գօմիթէ գապինէսի ազալըլընա թէրֆի
խալմիշ տիր :

Աշի գէմանտա մասօն լոժարըն «խիւտաի նապիթ մանթարլար
կիպի» հէր թարաֆտա չօլալմազա պաշլատըլար: Իճթիմուսթը խաֆի օլան
վէ գօմիթէյէ մէնսուպ զապիթանտան միւթէշէքիլ պուլունան պիր Տի-
վանը հարպ տախի մախուլ Սուլթանըն լէհինտէ կիպի թէրթիպ խալմիշ
օլան հարաքէթին ճիտաիյէթինէ ինանմըշ օլանլարըն քեաֆիթսինի տէ ա-
սար վէ սիւրէր, վէ եէնի իտարէյէ օլան թէվէճճիւհէրինի աշիքեար սու-
րէթտէ իպրապ էլլէմէյէնլէրին ճիւմլէսինի, քէյֆի օլարազ րէսմի մէմու-

րիչելէրտէն թարտ էտէր, վէ պէօյէլիքէ Սթանպօլ իւզէրինտէ սահիհ պիր տէնչէթ հիւքմ էթարիր տի Պու սրբատա Սէլանիք Կահուտիլէրի վէ Կահուտիլէրտէն տէօնմէ օլանլար, լօփար լէհինտէ խաֆիյէն ֆասլ պիր քրօքալանա Կարարլար վէ, մէմուրիյինի էմին օլարագ մուհաֆազայա, թէրֆի էթմէյէ վէ մուսվէնէթի նազարիյէ իսթիսալնա Եէկհանէ չարէ ֆրանմասօնլուղա ինթիսապ էթմէքտէ օլաուզընը պէյան էթէրլէրտի, չէօյէ քի պիր գաչ աչ զարֆընտա մասօնլուղա տախիլ օլանլարն աւէտի տէնչէթի սուրէթտէ չօլալար :

Տիկէր ճիւլթան տէ, հիսսիյաթը վաթանքէրվէրանէլէրինի մէնֆա- աթը շախալէլէրինէ ինքնի իտէնլէրին թէվէճճիւհիւհիւ գազանմագ իչուհ, գօմիթէ քէնտի կազէթալարը վէ ազալարընըն վէրտիյի ումումի գօնֆէրանլար վասիթասրլա Կիրիտ, Մըսըր վէ սայիր մէսէլէլէլին թիրիքիտ լէհինտէ օլարագ նալ օլընաճաղընա տաիր թէէմինաթտա պու- լունուհօրտը : Մամաֆիյ, պուսլարա րալմէն Կինէ Ժէօն թիւրք իսա- րէսինէ սէրֆիւրու էթմէյէլէր, միւրթէճի նամը ալթընտա մահքիւմ իտիլմէք վէ Կաթտո նէվանէվ «վուգուաթա» մարուզ գալմագ թէնլիքէ- սինտէ պուլունուչօլարտը :

Պիլ ճիւմէ պու «թէտապիրի հիւրիյէթէրվէրանէ» նէթիճէսի օլա- րագ պալատէ արզ իտիլտիյի իւլրէ, «հիւրիյէթ գարա սչարընըն» աւէտի տէնչէթի սուրէթտէ արթաը վէ հիւքիւմէթ արթըք թէքմիլ պիր մասօն հիւքիւմէթի օլաու : Ֆրանտա իսթիլալնա իթիլպանէ, Զապիյէ նէ- զարէթի լալվ օլունարագ, Կէրինէ «էմիլիէթի ումումիյէ միւտիլիյէթի» գաթմ օլաու, վէ միւտի սրֆաթըրլա ֆրանմասօն Ղալիպ պէյ թային օ- լընտը : Ֆրանմասօն Կահուտի Նէճիպ Ֆազլ պէյ» Մաթպուաթը տախիլիյէ Միւտիլիյէթիյինէ վէ քէնտի Կահուտի արգատաչարընտան պիրի տէ «Մաթպուաթը էննէպիյէ միւտիլիյէթիինէ» կէչտի : Պիր Կրանթ Օրիան թէէսիս իտիլէրէք, տախիլիյէ նազըրը Թալէաթ պէյ տէ Կրան Մէթր թա- յին օլունտը, վէ Նէճիպ Ֆազլի պէյին ինպարր իւզէրինէ, Թալէաթ պէյ Տիվանը հարպը թէչքիլ էլլէյէն «գարատաչար»ա հիւքիւմէթի թէն- զրտա ճիւրէթիապ օլան զազէթալարը թաթիլ վէ սահիպի իմթիյալտ- րինտա մահպուսալլա էլլէմէյի էմր էտէրտի Պազը զազէթաճըլար հապ- գընտա տա տահա սէրի իւլ աւէլ թէտպիրլէր իթիլիապ օլունտըլար :

Կահուտիլիքտէն տէօնմէ, վէ «մէչրութիյէթ» «լօթ»ընընտա «Կրան Մէթր»ը օլան Ճալիա պէյ մալիյէ նէզարէթինէ կէչտի վէ Նէսսիմ Բուսսօ նամընտա տիկէր պիր Կահուտի ֆրանմասօնը տա մանէթինէ ալար :

Մէճլիսի Մէպուսանտաքի գօմիթէյէ մէնտուպ ֆրանմասօնլարն աւէտի 90 օլուպ պուսլար տախիլիէ նազըրը Կրան Մէթր թալէաթ պէյին էմրինէ կհօրէ քէնտի գուրալարընը իսթիմալ էտէրլէրտի : Եավաչ Կալաչ պիզգաթ գապինէ տախիլինտէ պիլէ ազալարը Թալէաթ, Ճալիտ պէյլէր- տէն վէ Շէյիս իւլ Իսլամ Մուսա ֆիւազիմ (քէք զիյատէ արգուլը ֆրան-

մասուն) վէ պահրիէ նազըրը բաշատան իպարէթ օլան ուրի Փրանմասուն պիր գապինէճիք թէշքիլ օլունար :

Նաֆաա նազըրը Հալաճեան էֆէնտի պիրազ իսթիզլալ կէօսթէրիր կիպի օլունճա, կէրէք մաթպուլաթտա վէ կէրէք Մէճլիսի Մէպուսանտա էն չիստէթլի մէհաճիմաթա մարուզ գալաը վէ սուգուլը առա օլուն-տուլը պիր սրբատա Ճալիտ պէյին «մէշրու թիլէթ» լօթընա տալիլ օլուր օլմազ, հէման թէնպիտաթ քէսիլտի վէ էվվէլ նէ դատար հագարէթ կէօ-րիւյօրաու իսէ, օնիսպէթտէ մէա՝ ու սէնալարա մագհար օլտու : Քէօր քէօրիւնէ գօմիթէյէ իթաաթ էթմէյի գապուլ էյլէմէյէն Սաարաղամ Հիւ-սէին Հիլմի բաշա բարլամէնթօ խարիճինտէ թէրթիպ օլունան պազը էս-րարէնկիպ մանուլարար նէթիճէսի օլարազ տիւշիւրիւլտիւ : վէ եէրինէ ծնտան չօյ զիյատէ եուճուշադ թապիաթլը օլան Հագգը բաշա կէթիրի-լէրէք, պունա տա քեաթիպի խուսուսի սըֆաթըլա պիր եահուտի վէր-մէյէ չիթալ խիլտի : Պու քեաթիպի խուսուսինին գայըն պիրատէրի պուլունան Ժազ Մէնալ, Մալիյէ Նազըրը Ճալիտ պէյին Բարիստէ ազա էտէճէյի իսթիգրազ միւզաքէրաթլընտա վէ սայիր մալիյէյէ վէ իմթիյազա այիտ մէսայիտէ վասիթալըզ յօլընը իճրա էթմիշ տիր :

Սաանա գըքաղարը Եահուսի վի Ֆրանկասուս ենքիկաղարը Աեթիճեպի ֆիւրիւր «Պու էանատէ, Մակեդոնիա վէ Ատանտա քրիսթիանլար գաթլ իտիլիյօրլարաը, Պիր պէօյիւք ինկիլիզ կաղէթասընըն ֆիքրինճէ, քրիսթիան-լարա գարչը իճրա էաիլէն պու գալիմ գըթալլարըն, Ժէօն Թիւրք հիւ-քիւմէթինի մէսուլ թուլթաճազ վազթըն կէշտիյինտէն սօնրա մէյտանա չըգարըլմասը, Մաճարիսթանտա, Ավսթրիատա, Ալմանիատա վէ սայիր էվրօքա մէմալիքինտէ հիւքիւմֆէրմա օլան եահուտի վէ Փրանմասուն թէսիրինին նէթիճէսի օլմուշ սըր : Շուրասը մուհազգազ տըր քի, պու վազտալարըն գըսմը ազամը, եահուտի օլմայան վէ հաթթա եահուտիլիյէ զըտտ օլան կազէթալար վասիթալըն էֆքեարը ումուճիյէ գարչի սինա սըզ օլունմըշարը» :

(Մապուսի վաւ)

ՍԽԱԼ ԹԵ ՍՈՒՏ

1912 Օգոստ. 3

Մուգ - Նորեկն

Վերջերս «Մուշի Առաջնորդին շահատախուլիւնը վերնագրով յօդ-ուածիկ մը կարդացինք Ազատաստիւն մէջ որուն մէջ կ'ըսէր նա իրիւ թէ Արհի. Թօփուգեան Գերապայծառն պարտաւորեցուցած ըլլայ Մուշի Միսիթ արեան Վարժարանին տեսուչ զՀ. Անտօն Ճնտոյեանն որ բոլոր ուսուցիչները ճամբէ և անոնց փոխարէն բերէ զգէս եւ ապիկար

անձեր . և այս լուրն ալ իր ըսածով իբրև թէ Վարչական Ժողովն Մուշէն կը տեղեկանայ : Արդ մենք չկրցանք ցարդ հասկնալ թէ այս՝ ո՛չ թէ սխալ , այլ սուտ լուրը ո՞վ հաղորդած ըլլայ Վարչական Ժողովին . քանի որ մենք մօտէն տեղեկակ Արհի . Թօփուզեան Գերապայծառի աբարքներուն , այդ տեսակ բան մը չենք լսած իր բերնէն , բայց վերջոյ խնդիրը լաւ մը քննելով հասկցանք որ այդպիսի սուտ լուր մը , Մուշէն հաղորդուած չէր Վարչական Ժողովին այլ Պօլսէն , և աս ալ այն երկու Մխիթարեան վարժապետներէն որոնք այսօր Պօլիս կը գտնուին ոչ թէ ուրիշէ մը բռնացեալ , և իրենց իսկ ազատ կամքով : Բայց ի՛նչ և իցէ այդ վարժապետները որոնք այսօր Պօլիս կը գտնուին , կրցած են այսպիսի սուտով մը Վանչական Ժողովին աչքը մտնալ անշուշտ , մեծ բանի մը ակնկալութեամբ , և արդարացիել այսպէս իրենց բաղդախնդրութիւնը յօտար երկիր աս ալ խելք մըն է!!! Բայց մենք կը բաղձայինք որ այդ վարժապետները անկեղծ ըլլային և իրենց այս բաղդախնդրութիւնը յօտար երկիր այսպիսի սուտ յերկրանքներով չոսկէզօծէին , զի այս իրենց պատիւ չի բերեր :

Ազատամարտ այդ իր յօդուածիկին մէջ դիտողութիւն մ'ալ կ'ընէ անշուշտ իրմէ ինչ որ չէ վրիպած մեր աչքերէն երբ կ'ըսէ թէ Արհի . Թօփուզեանին միտքն է եղեր , ատոնց տեղ (վարժապետաց) տեղն և ապիկար անձեր դնել , անշուշտ այս յաւելուածը իրմէն է : Բայց մենք չենք կրցած ցարդ ստուգիլ հասկնալ թէ մեր մէջ արդեօք կա՞ն զիտուն և ոչ ապիկար վարժապետներ , եթէ կան ալ մինք բաղդն չունեցանք անոնցմէ գէթ մին տեսնելու . . . վայելելու մեր վարժարանաց մէջ . բայց իր միտքն այս է թէ գիտուն և ոչ ապիկար կը նկատուին ամէն այն վարժապետները որոնք գիտին թուղթ մը սէւցնել և Ամենապատիւ Թէրզեան կաթ . Պատրիարքին դէմ գրել , գրել , ի՛նչ . գրել բաւական որ գրուի , այն միայն կը խլէ եղեր յաղթութեան դափնին , և այն լոկ կտրակէ եղեր զիրենք գիտուն և կարող մակդիրով , մակդիրներ որոնք ո՛րքան հեռի են մեր ոչ միայն այդ վարժապետներէն այլ մեր համայնքին ընդհանուր վարժապետական դասակարգէն քիչ բացառութեամբ սակայն :

Կ'ըսենք հոս սակայն ոչ միայն Ազատամարտին , այլ և Վարչական Ժողովին , այլ և մեր ամբողջ հասարակութեան , թէ սուտ և բռնութիւն անհիմն է Արհի . Թօփուզեան Գերապայծառին անձնաւորութեան վերաբերուած այդ վերոյիշեալ շահատակութիւնը : Արհ . Թօփուզեան Գերապայծառ բնաւ շահատակութիւն ըրած չունի և ընելու միտք ալ չունի . նա իսկապէս տողորուած է այն ոգիով որ է « մի՛ իբրև տիրելով վիճակաց այլ լինիլ օրինակ հօտին » , նա մարմնացում մըն է հեզութեան և խոնարհութեան , նա բնաւ ժողովուրդի իրաւանց դէմ մաքառող մէկ մըն է , և կ'ուզէ որ ամէն բան իր սահմանին մէջ ըլլայ , ու միշտ հակա-

ուակած է ծայրայեղութեան որ Քրիստոնէական ոգիէն առաջ չի դար
այլ կիրքէն, և իր սկզբունքն է գործել միասին, ընթանալ համերայի,
այնպէս որ երկու ծայրերէն ոչ մին իրենց սահմանը անձնելով անքայ
կամ բռնանայ, բայց կան ոմանք որ անոր այս առաքելական ոգին չեն
ըմբռներ կամ չեն ուզեր ըմբռնել կամաւ. իր շահատակութիւնն, այս՝
իր բարի շահատակութեանց մին եղած է այն որ անմիջապէս ձեռնար-
կած է Մշտյ հինցած Առաջնորդարանը և եկեղեցին նորոգել տալ որոնք
մօտ ատենէն լմննալու վրայ են. թէ և առաջնայն մէջ չը բնակիր չնոր-
հիւ մեր աղա իշխաններուն . . . :

Իրեն ուրիշ մի բարի շահատակութիւնն ալ այն է որ կ'ուզէ նոր-
շէն գիւղի փլփրած եկեղեցին ի հիմանց կանգնեցնել, միայն թէ ապա-
հով ըլլայ որ հակառակորդաց կողմանէ ոսնձգութեանց չը բաղխի, ինչ
որ անհաւանական չէ զի հակառակորդք շինելու այնչափ մէտ չեն երե-
ւիր որքան աւերելու :

Արդ եթէ այս բարի շահատակութեանց համար Վարչական Ժողովն
կ'ուզէ զինքն Մուշէն հեռացնելու միջոցներուն վրայ խորհիլ, այդու
այժմէն իսկ կը ցուցնէ իրեն սխալ ընթացքը որ է անմիջապէս հաւա-
տալ ամեն ոգւոյ, և առանց դատելու վճռել : Բայց կ'ըսենք իրեն խո-
նարհարար, որ քիչ մը աւելի խոհեմութեամբ շարժի, և աւելի աշալըր-
ջութեամբ գործէ, այն ատեն կրնայ գիտնալ թէ մեր թեմն այն թեմե-
րէն չէ որ քանի մը մարդկանց խօսքերուն վրայ հապճեպով մը դնէ իր
հովիւր անոր ձեռք զոր կը յարգէ և կ'ընդունի և պիտի ընդունի մինչև
վերջ իրրև հովիւ զրկուած մեծ հովուապետէն :

Ճշմարիտ ՀԱՅ-Կաթողիկէ
(Գիւղացի մը)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Հ Ռ Ո Վ Մ

Ո). Քահանայապետը սովորական չքեղ տարրադրութիւններով ընդունեց վերջերս Վա-
տիկանու մօտ զրկուած Ռուսիոյ նոր դեսպանը՝ Կոմս Նէլիսօֆը :

*. Ամերիկայի հարաւային հանրապետութիւններէն մէկը եղող Բէրուէն մասնաւոր
խումբ մը եկած է ուխտաւորներու ի Հռոմ, իրենց հայրենակիցներուն խորին յարգութիւնն
և որդիական հնազանդութեան հաւատարմքը մատուցանելու համար Ո). Քահանայապետին,
որուն ներկայացան՝ Բէրուի Վատիկանու մօտ եղած դեսպանին բացակայութեան պատճա-
ռաւ, նոյն դեսպանատուն առ աչին ի տարգման Տէ Բօտտի Կամիոյի ձեռքով, գեղեցիկ աչպօմ
մը նուիրեցին Ս. Պապին, որ կը կրէր ոչ նուազ քան վաթսուն հազար ստորագրութիւն :



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Անցեալ Ուրբաթ օր Հայ Երեսփ, ժողովը շատ կարեւոր դեմարում մը ունեցաւ Տաւրոնի և Վասպուրականի մէջ Հայոց ամենաթշուառ վիճակին, հոն գործուած շարունակեալ անիրաւութեանց, սպանութեանց և այլևայլ կեղեքումներու մասին ժողովականք, կորովի կերպով բողոքելով հանդերձ, ի վեր հանեցին կառավարութեան մինչև ցարդ բռնած ընթացքը և անոր ուշադրութիւնը հրաւիրեցին խնդրոյն արտակարգ կարեւորութեան վրայ. և այս նպատակաւ առաջարկեցին ազգու միջոցներու դիմել, մինչև իսկ՝ եթէ իրենց դիմումը այս անգամ ալ անկելի մնայ, Պատրիարքն անպատճառ մատուցանէ իր հրաժարականը և փակուին Պատրիարքարանն ու եկեղեցիները: Մայրաքաղաքիս մի քանի թերթերն, ինչպէս Լէվանք Զեւալս, Թանգիւմս, Բոօօսու, ևլն., յուզեալ շէշտերով յօգաւածներ հրատարակեցին հայ մարտիրոսագրութեան և քրդերուն ապերաւան շահատակութեանց վրայ:

Նախարարաց Խորհուրդը Բ. Դրան մէջ նիստ գումարեց Բեամիլ փաշայի նախագահութեան տակ, որովհետեւ վարչապետը այն օր անձնական տկարութեան պատճառաւ բացակայ կը գտնուէր: Խորհուրդը զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով:

Խորհրդակցութիւն կատարուեցաւ Հայաստանի կոտորութեան վրայ: Ներքին գործոց նախարար Տանիշ պէյ առջի օր շնչականն ու իթիլաֆեան կուսակցութիւններու կողմէ կատարուած գիմումներուն և Հայաբնակ նահանգներէ հասած նոր տեղեկութիւններու վրայ խօսեցաւ և բացատրութիւններ տուաւ այն միջոցներուն մասին, որոնց գործադրութիւն հրամայուած է տեղական իշխանութիւններուն:


Ազգ. ժողովի ուրբաթ օրուան արտասովոր նիստը եւ Հայ ազգին յուսահատական ցոյցը մեծ տպաւորութիւն ըրած են ինչպէս օտար, նոյնպէս Բ. Դրան շրջանակներուն վրայ և Նախարարաց Խորհուրդի էրէկուան նիստին մէջ այս մասին լուրջ Խորհրդակցութիւններ կատարելով, մասնաւոր հոգածութեամբ կարգադրեցան Ազգ. ժողովի մէջ արտասանուած և թէ՛ Հայ և թէ՛ օտար թերթերու մէջ հրատարակուած ճառերը ու յայտարարութիւնները: Նախարարաց Խորհուրդը Ատանայի պէյ ահալի աղէտի մը առջև չգտնուելու համար, որոնց կրկին և կրկին տմենախիտ հրահանգներ տալ գումառային իշխանութիւններուն, որ անմիջապէս ձերբակալեն Միր Մհէի, Սախի և այլոց պէս շարագործները և իմացնել թէ իրենց պարտականութեանց մէջ ամենափոքր թերութիւն գործող կուսակալները ոչ միայն պաշտօնէ պիտի դուրսին, այլ նաեւ ամենախիտ կերպով պիտի պատժուին:

* Պոլսոյ դեսպանական շրջանակներու մէջ ևս կը հաստատուի թէ օսմ. կառավարութիւնը իր շահուն համար իսկ պարտաւոր է ազգու հրահանգներ տալու և լուրջ միջոցներ ձեռք առնելու, որպէս զի ներկայ կնճռոտ խնդիրներուն վրայ Արևելեան խնդիր մը եւս չը բարդուի: Դեռ պանական շրջանակներու մէջ մեծ անհամբերութեամբ կը սպասուի այդ միջոցներու գործադրութեանը և արգիւնքին: Ամէնէն մեծ հետաքրքրութիւն պատճառող պարագան սա է թէ ներկայ դահլիճը քաջութիւն պիտի ունենայ Միր Մհէի պէս մարդասպանները ձերբակալելով կախաղան բարձրացնել: Այս պարագան մեծապէս կ'զբաղեցնէ Պոլսոյ դիւանագիտական մարմինը:

* Նախարարաց Խորհուրդի նիստէն ետք, տրուած որոշման մը համաձայն, Ներքին գործոց նախարար Տանիշ պէյ իսկոյն շրջաբերական հեռագիր մը ուղղեց Հայաբնակ նահանգներու կուսակալներուն, Միւթէսարքներուն և Գայմաղամներուն ու տեղական անդադրութիւնը ապահովելու մասին մասնաւոր հրահանգներ տալէ ետքը տեղեկացուց թէ ամենափոքր դէպքի տեղի տուողները պատասխանատու պիտի նկատուին և խստիւ պիտի պատժուին:

* Նախարարաց Խորհուրդը զբաղեցաւ նաեւ Հայաստան զրկուելիք յանձնաժողովի պաշտօնին և իրաւասութեան հարցով: Այս յանձնաժողովը պարզապէս քննիչ մարմին մը կ'աշխատէր ունի և հայաբնակ նահանգները շրջելով պիտի ուսումնասիրէ կառավարական կազմը և իրաւասութիւն պիտի ունենայ պաշտօնանկ ընելու զեղծանող անարժան պաշ-

տօնեաները՝ Այս առթիւ պիտի քննէ նաև տեղական պահանջները և հանրային անդոր-
րութիւնը խանգարելու բնոյթ ունեցող խնդիրները: Նախարարաց խորհուրդը իր առաջիկայ
նիստին մէջ պիտի ընտրէ այս յանձնաժողովին անդամները:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Հետզհետէ փոփոխութիւններ, պաշտօնանկութիւններ ու նոր անուանումներ կը կա-
տարուին կուսակալներու, կուսավարիչներու և գայմագամներու, ոնցեայ վարչութեան
կուսակցական շահերու բերմամբ ըրած անիրաւ տրամադրութիւնները ու սխալ գործերը
գարմանելու համար:

* * * Կոմս Պէրիթօլտի առաջարկը, որու վրայ երկարօրէն զբաժ էինք մեր 57 թիւին
մէջ, յաջորդաբար ընդունելութիւն կը գտնէ եւրոպական պետութիւններու դիւանաց մէջ:

* * * Ներքին գործերու նախարարի խորհրդական անուանուեցաւ Պետական խորհրդոյ
առաջին քարտուղար Ֆուատ պէյ որ երէկ Սուլթանին ներկայացաւ:

* * * Իթթիհատ իր կուսակցութեան նախագահութիւնը առաջարկեց Հիւսէյին Հիլմի
փաշայի, որ պատասխանեց թէ պատրաստ է ընդունիլ ինչ ինչ պայմաններով: Ասկա իթ-
թիհատի համար մեծ շահ մըն է. քրովհետեւ նախկին վարչապետին անունը կրնայ իր կու-
սակցութեան փայլ մը տալ ժողովուրդին մէջ: Հիւսէյին Հիլմի փաշա, վերջեա, երեսփ.
ժողովին լուծման ատեն քացէ ի քաց պայքարեցաւ Իթթիհատի դէմ, սակայն այդ պայ-
քարին մէջ իսկ տեսնուեցաւ որ Հիւսէյին Հիլմի փաշա Իթթիհատի բոլորովին բնաջնջ ըլ-
լալը չուզեր, այլ կը փափաքէ ուղղութեան բերել: Նոր դահլիճը կազմուելէն ետքն ալ այդ
ուղղութեամբ գործել ուզած է: Անոր կարծիքով, Թուրքիոյ ներքին քաղաքականութեանը
համար լաւագոյնը պիտի ըլլար Իթթիհատի հետ համաձայնութեան մը գալ: Իթթիհատի
համաժողովը մեծամասնութեամբ որոշեց երեսփ. ընտրութեանց մասնակցել: Միւս կողմէ
Հիւսէյին Հիլմի փաշա Իթթիհատի դէմ անհաշտ խումբին ազդեցութենէն ազատեցաւ,
ուստի հաւանական է որ համաձայնութիւն մը գոյանայ: Հիլմի փաշա շատ մօտէն գիտէ
Մակեդոնիոյ կայութիւնը. Իթթիհատ շատ վարպետ և շատ ազդեցիկ վարիչ մը պիտի գտ-
նէ անոր մէջ: Յաւանջիկայ երեսփ. ընտրութեան պահուն, ժէզն Թիւրքերը կրնան կարեւոր
դերք մը ունենալ իրենց լաւ կազմակերպութեան շնորհիւ: Եւ եթէ այժմու երկու կարեւոր
խնդիրները, հաշտութեան և ոչ-իսլամ ժողովուրդին վիճակին փոփոխութեան հարցերը լուծ-
ուին, այն ատեն Իթթիհատ Հիւսէյին Հիլմի փաշայի ղեկավարութեան շնորհիւ կրնայ շուտ
մը իր դերքը շտկել: (Ն. Ֆ. Բրէսի)

* * * Նախկին նախարար մը իր քնկերներով բանհարկուած. Պատերազմական ատ-
եանին առջև երէկ գատուեցան Թալիսի ու անոր յաջորդ թերթերու պատասխանատու
տնօրէն Օրխան Թալէաթ, խմբագիր Ճափի և խմբագրապետ Ճահիտ պէյերը, իրենց թեր-
թին մէջ երեւցած միտքերը յուզող հրատարակութեանց համար: Ատենը քսանական օր-
ուան բանտարկութեան դատապարտեց Օրխան Թալէաթ և Ճափիտ պէյերը, իսկ մէկ տմ-
ուան՝ Ճահիտ պէյը — Ճափիտ, Ճահիտ և Օրխան Թալէաթ պէյերը երէկ իսկ ձերբակալ-
ուելով Պատերազմական նախարարութեան պաշտօնատան բանար զրկուեցան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վերափոխումն Ս. Կուսիմ	497
Ֆրանմասօնըզ վէ Թիւրքիա իւլէրի	505
Սիալ քէ սուս	508
Տեղեկագրական	510

ԱՐՏՕՆԱՏԷՐ

3047. Ծ. Վ. ԿԵՏԻԿԱՆ

ՏԵՈՐԷՆ-ԽՄԲԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Կործակցական Ընկ. Էպուսուուս հասէսի թիւ 27

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

«Արձագանգ» շաբաթաթերթիս Երկրորդ տարւան ա-
ռաջին վեցամսեայն Յուլիս 28|10 Օգոստոսին լրացած ը-
շաբթի, անցին վեց ամսոյ համար բաժանորդ գրուած Պատ.
եւ Մեծ. ընթերցողաց կը յիշեցնեմք որպէսզի իրենց բաժա-
նորդութիւնը անորոգել հասին քերթիս առաջնան մէջ դա-
դարու չ'ըլլալու համար:

Մեր բաժանորդաց ուշադրութիւնը կը հրաւիրենք թէ
Արձագանգիս հասցէն է,

Katoghiké Arzakank
5 Rue Baïram 5.
Péra Constantinople

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ» Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան, պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոյց ամէն յուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դնեկ. արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ կամ մէկ մէկ դրոնոց նամակադրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան

—*—

Նշանակ, յօդուած, եւն. կը ղրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ

Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghiché Arzakank

5 Rue Bâïram 5

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Ներածանց կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պատշաւորեալ չէ անպատշաւ կամ ճոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած:

3.— Զեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Տօգրուածներու ձեռագիրները պէտք է գրուած քլլան բուղրին մէկ կողմը միայն:

5.— Մանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: